«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«08» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025Թ. **N 455-Լ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի «Է» կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «գ» և 29-րդ կետի «գ» ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու և 10.06.2020թ.-ի թիվ 88-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»» թիվ 4-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված հավելված 1-ում կատարել հետևյալ լրացումը.

ա) աղյուսակի «Ստորաբաժանում» սյունակում «Վարչական մաս» մասում լրացնել 1 տող հետևյալ բովանդակությամբ.

պաշտոն՝ «Տնօրենի տեղակալ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «723,600», գործակից՝ «0.9» բառերը և թվերը,

2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝

X _____

Դ. ՂՈՒԼՅԱՆ